2021թ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

Դրամաշնորհ տրամադրելու մասին

ք. Հրազդան <<29>> «հունվարի» 2021թ.

ՀՀ Կոտայքի մարզպետարանը,ի դեմս Գլխավոր քարտուղար Լ.Պետրոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և ՀՀ Կոտայքի մարզի <<Կոտայքի մշակույթի կենտրոն>>ՊՈԱԿ-ը, ի դեմս կազմակերպության տնօրեն՝ Ա.Սիմոնյանի ,որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա(այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել պետական չափորոշչին համապատասխան սովորողների ուսուցումը, ,Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին և ՀՀ օրենքով նախատեսված. համայնքային մշակութային միջոցառումների կազմակերպման պարտավորություններ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. *Պատվիրատունիրավունքունի.*

2.1.1.Վերահսկել կատարողին հատկացված դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը.

2.1.2.Պահանջել կատարողից ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ:

2.1.3.Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2. Կատարողն իրավունք ունի.

2.2.1. Պատվիրատուից ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում և կարգով:

2.3. *Պատվիրատուն պարտավոր է.*

2.3.1. Կատարողինցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն և աջակցություն.

2.4. *Կատարողը պարտավոր է.*

2.4.1. Ծառայությունների մատուցումը իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևով.

3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1.Սույնվ Պայմանագրով Կատարողի Ծառայությունների գինը կազմում է 2914300 (Երկու միլիոն ինը հարյուր տասնչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ,ծառայությունները մատուցում է 0% շահույթով:Գինը ներառում է կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ բացառապես աշխատավարձի տեսքով, այդ թվում հարկերը և այլ պարտադիր վճարները:

3.2.Պատվիրատուն 3.1 կետում նշված գումարը ,Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասինե ՀՀ օրենքի համաձայն փոխանցում է Կատարողի հաշվին համամասնորեն՝ ամսական կտրվածքով՝ համաձայն սույն պայմանգրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի /այսուհետ Հավելված/, ոչ ուշ քան մինչև տվյալ ամսվա 10-ը: Պատվիրատուն վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվին փոխանցելու միջոցով:

4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ-ՀԱՆՁՆՈՒՄ

5.1.Սույն պայմանագրով նախատեսված ծառայության ընդունումը կատարվում է համաձայն հանձնման-ընդունման ակտի՝ մինչև 2021թ.-ի դեկտեմբերի 30-ը:

6.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

7.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր /համաձայնագրեր/ ձևակերպելու միջոցով: Վերջիններս կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագիրը կազմված 2 էջից, անբաժանելի մաս կազմող հավելվածից /1 էջ/, և հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կոտայքի մարզպետարան	ՀՀ Կոտայքի մշակույթի տուն
ք. Հրազդան, Կենտրոնվարչ. շենք	Հասցեն՝ ք. Հրազդան
Կոտայքիմարզպետարան	**Կենտրոնական Գանձապետարան**
Հ/Հ 900121071022,	Հ/Հ 900128000230
ՀՎՀՀ 03014577	ՀՎՀՀ 03008809
մարզպետարանի գլխավոր քարտուղար՝	ՊՈԱԿ-ի տնօրեն՝
----------Լ. Պետրոսյան	**Ա.Սիմոնյան** ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)Կ.Տ
Կ.Տ	